Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
24 հոկտեմբերի 2023 թվականի N 358-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2023 թվականի հոկտեմբերի 27–ից

IDBank Concierge ծառայության վերաբերյալ արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավի ժամանակահատված՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից 27.10.2023թ-ից 15.12.2023թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Պրեմիում դասի քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված Visa Travel, Visa Signature, Visa Infinite, Visa Infinite Special Edition, Visa Business Platinum քարտ:
1.3 **Քարտատեր՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված Պրեմիում դասի քարտի քարտատեր:
1.4 Արշավին մասնակցելու դեպքում Քարտատերն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

2. Արշավի պայմաններ.

2.1 Telegram հարթակի IDBank concierge-ում 27.10.2023թ-ից 15.12.2023թ-ը ներառյալ գրանցված Քարտատերերը դառնում են խաղարկության մասնակից, որի արդյունքում կարող են շահել 30 հատ 100 եվրո (համարժեք այլ արժույթ) արժողությամբ վաուչերներից մեկը:

2.2 Խաղարկությանը մասնակցում են այն Քարտատերերը, ովքեր մինչև Արշավի ավարտը կգրանցվեն IDBank concierge-ում ինչպես նաև կունենան IDBank concierge-ի ծառայություններից օգտվելու իրավասություն (eligible user):

2.3 Շահած վաուչերը հնարավոր է օգտագործել ավիատոմսերի, գնացքի տոմսերի, հյուրանոցների վճարումների (այսուհետ՝ Վճարում) համար: Ընդ որում Վճարումը հարկավոր է կատարել Քարտատիրոջ Պրեմիում դասի քարտով (Քարտերով) 27.10.2023թ-ից մինչև 29/02/2024թ-ի ընթացքում, որի արդյունքում Բանկը կփոխհատուցի 100 եվրո (համարժեք այլ արժույթ) քեշբեքով:

2.4 Խաղարկության հաղթող Քարտատերերի կողմից 27.10.2023թ-ից մինչև 29/02/2024թ-ի ընթացքում Պրեմիում դասի քարտով (Քարտերով) Վճարում չկատարելու դեպքում 100 եվրո (համարժեք այլ արժույթ) արժողությամբ վաուչերները կհամարվեն անվավեր և գումարային փոխհատուցում չի տրամադրվի:

2.5 Խաղարկության հաղթող Քարտատերերին 100 եվրո (համարժեք այլ արժույթ) քեշբեքի փոխհատուցում կտրամադրվի, եթե Պրեմիում դասի քարտը (Քարտերը) լինի գործող քեշբեքի տրամադրման պահին:

2.6 Անկախ առկա Պրեմիում դասի քարտերի քանակից Քարտատերը խաղարկությանը մասնակցելու է մեկ հայտով:

2.7 խաղարկությունը տեղի է ունենալու առցանց եղանակով՝ Արշավի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Խաղարկությանը օգտագործվելու է Քարտատերերի անվան և ազգանվան առաջին տառերը և IDBank concierge-ում գրանցված բջջային հեռախոսահամարի վերջին 4 նիշերը:

2.8 Հաղթող 30 Քարտատերերի հետ խաղարկության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Բանկի կողմից կապ կհաստատեն և/կամ էլեկտրոնային հասցեին կուղարկեն 100 EUR (համարժեք այլ արժույթ) արժողությամբ վաուչերը:

2.9 «ԱյԴի Բանկ» ՓԲԸ և «Իդրամ» ՍՊԸ աշխատակիցները չեն մասնակցում խաղարկությանը:

2.10 Հաղթող Քարտատերերին քեշբեքը կվճարվի Վճարում կատարած Պրեմիում դասի քարտի արժույթով՝ հիմք ընդունելով վճարման օրվա դրությամբ Բանկի համապատասխան փոխարժեքը:

2.11 Քարտատերերի կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և վերջիններիս կողմից լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.12 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: